

Հայրավանքի գյուղատնտեսական եւ անասնաբուժական սպասարկման նորաբաց կենտրոնը կսպասարկի 10 համայնքի

20.10.2015

Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ կառուցվել է գյուղատնտեսական եւ անասնաբուժական սպասարկման կենտրոն: Կենտրոնի բացման արարողությանը մասնակցեցին ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանյան գրասենյակի ղեկավար Քարեն Հիլիարդը, «Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի եւ Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության աջակցության կենտրոնի ներկայացուցիչներ, Գավառի տարածքի համայնքների եւ գյուղացիական տնտեսությունների ղեկավարներ, Հայրավանքի բնակիչներ: Ըստ «Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչ, ծրագրի ղեկավար Կարեն Հարությունյանի՝ Հայրավանքի գյուղատնտեսական եւ անասնաբուժական սպասարկման կենտրոնը զարգացնելու է տեղացի ֆերմերների հմտությունները եւ լավագույն փորձն է փոխանցելու գյուղատնտեսական եւ անասնաբուժական, ինչպես նաեւ անասնաբուժական եւ անասնապահական ծառայություններ տրամադրող անձնաց: Կենտրոնում հայ եւ օտարերկրյա մասնագետների կողմից անցկացվելու են աշխատաժողովներ եւ վերապատրաստման դասընթացներ: Այս կենտրոնն առաջինն է, որ բացվել է «Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրի ներքո: ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը նշեց, որ սա թվով 12-րդ գյուղատնտեսական եւ անասնաբուժական սպասարկման կենտրոնն է, որից 3-ը հիմնվել է Գեղարքունիքում, որտեղ տարեցտարի ավելանում են մշակվող վարելահողերը, անասնազրահանքանակը, եւ այս առաջընթացում նկատելի է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության ծրագրի դերը, որի շրջականերում մարզի համայնքներում կառուցվել է 47 կիլոմետր երկարության ջրագիծ, տեղադրվել 48 խմոցներ, ջրարբիացվել 40 հազար հեկտար արոտ, համայնքներում ստեղծված գյուղատնտեսական կոոպերատիվներին հատկացվել է 258 միավոր գյուղտեխնիկա: Ըստ նախարարի՝ ծրագիրը կշարունակվի մինչեւ 2020 թվականը, որտեղ կընդգրկվեն նոր համայնքներ, նոր բաղադրիչներ»:

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը նշեց, որ վերջին 3-4 տարիների ընթացքում մեծ ծավալի աշխատանքներ են կատարվում Գեղարքունիքի մարզի գյուղատնտեսության ոլորտում, ինչն արդյունք է ՀՀ կառավարության ամենօրյա հոգածության եւ աջակցության ծրագրերի ներդրման եւ գյուղացիական տնտեսությունների ջանադիր աշխատանքի, որի շնորհիվ 2014 թվականին մեր մարզի գյուղատնտեսությունը 14 տոկոս տնտեսական աճ է ապահովել: ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանյան գրասենյակի ղեկավար Քարեն Հիլիարդը ներկաներին կոչ արեց՝ օգտվել նորաբաց կենտրոնի մասնագիտական եւ ֆինանսական ծառայություններից: Կենտրոնի բացման ժապավենը կտրեցին ՀՀ գյուղնախարար Սերգո Կարապետյանը եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության Հայաստանյան գրասենյակի ղեկավար Քարեն Հիլիարդը: Նորաբաց կենտրոնը խորհրդատվական եւ տարբեր կարգի ծառայություններ կմատուցի Գավառի տարածքի 10 համայնքների ավելի քան 2 հազար տնտեսությունների: